

այդ մտածումները լաւագոյն ձեւով արտայայտելը՝ պերճախօսութեամբ եւ հռետորական ոճով:

Սոփեստներու փիլիսոփայութիւնը յարաբերապաշտական (Relativism) է թէ՛ իրաւական եւ թէ՛ կրօնա-բարոյական մարզերու մէջ: Սոփեստներու համաձայն, իրաւական օրէնքները «կը բռնանան» մարդոց վրայ եւ անոնք ստիպուած կ'ըլլան իրենց բնութեան հակառակ գործելու: Սոփեստները կրօնի հանդէպ կասկածամիտ էին. անոնց համաձայն մարդը ինքն է որ հնարած է աստուածները:

Յունական դասական փիլիսոփաները (Սոկրատէս, Պլատոն եւ Արիստոտել) խստօրէն քննադատեցին սոփեստութիւնը, զայն խարդախ, անպարկեշտ եւ ամբոխավար կոչելով: Այս պատճառով ալ սոփեստութիւնը ժխտական իմաստ ստացաւ եւ սոփեստը դարձաւ՝ իմաստակ (կեղծ իմաստուն):

Նշանաւոր սոփեստներ եղած են՝ Պրոտագորաս եւ Գորգիաս:

- **Պրոտագորաս** (Prōtagóras, 490 – 411 մ.թ.ա.)

Ծնած է՝ Աբդերա (Abdera, Յունաստանի հիւսիսը) ու ապրած՝ Աթէնքի մէջ, ուրկէ, անաստուածութեան (Atheism, յուն.՝ *asébeia*) պատճառով արքայութեան Ե Սիկիլիա կղզի: Աքսորի ճամբուն վրայ, սակայն, խեղդամահ եղած է:

Պրոտագորասի կարեւոր երկերէն մէկը, որ չէ պահպանուած, կը կոչուի «Աստուածներու մասին» (յուն.՝ *„peri theōn“*), ուր կը գրէ. - *«Աստուածներու վերաբերեալ, ինծի համար անկարելի է գիտնալ, որ գոյութիւն ունի՞ն կամ ոչ, առաւել՝ թէ ի՞նչ կերպարանք ունին անոնք...»*:

Պրոտագորասի նշանաւոր խօսքերէն է՝ *«Ամէն ինչի համար կան երկու հակադիր արտայայտութիւններ»*, ինչպէս օրինակ՝ «Սոկրատէսը մարդ է» եւ «Սոկրատէսը մարդ չէ»: Այլ նշանաւոր խօսք մը, որ բազմաթիւ ու իրերամերժ մեկնութիւններու արժանացաւ, հետեւեալն է. - *«Մարդը բոլոր իրերու չափանիշն է. ե՛ւ գոյերու, ինչպէս որ կան ե՛ւ ոչ-գոյերու, ինչպէս որ չկան»*:

Պլատոնի երկերէն մէկը կը կոչուի «Պրոտագորաս», ուր Սոկրատէս կը պատմէ Պրոտագորասի հետ իր հանդիպման մասին եւ ընդհանրապէս սոփեստներու մասին:

- **Գորգիաս** (Gorgias, 485 – 380 մ.թ.ա.)

Ծնած է Լենտինի (Lentini, յուն.՝ *Leontinoi*) քաղաքը, Սիկիլիա կղզիի վրայ ու սոփեստներու սովորութեան համաձայն թափառած է՝ Յունաստանի մէջ: Գորգիաս եղած է հռչակաւոր պերճախօս ու հռետոր: Հռետորական իր դասաւանդութիւնը կ'ընդգրկէր թէ՛ տեսական եւ թէ՛ գործնական բաժիններ: Հռետորական արձակ ճառերը աւելի ազդեցիկ ու պերճախօս դարձնելու համար, ան բանաստեղծական չափածոյ մէջբերումներ կը կատարէր: